Հարավարևելք, Կարմիր Բանակի գեներալներ և սպաներ, Ավստրիայի ակադեմիայի պետական

կան և ամերիկյան երգեր և ռուսական պարեր։

ՅԱՄԱՍԻՏԱՅԻ ՄԱՇԱՊԱՏԻԺԸ

ՆՅՈՒ—ՅՈՐՔ, 23 փետրվարի (ՏԱՍՍ).— Ասոշիեյտեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ Ֆիլիպպիններում ճապոնական նախկին հրամանատար գեներալ-լեյտենանտ Ճամաշիտան, Ֆիլիպիններում ճապոնական

գաղտնի ոստիկանության նախկին պետ փոխգնդապետ Օտան, ինչպես նաև ճապոնական թարգմանիչ Խիգասիգին կախաղան են բարձրացվել որպես պատերազմի հանցագործներ։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԹՅՈՒՐՔԻԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԹՂԹԱԿԻՑ-ԱՆԴԱՄ ՊՐՈՖ. Ա. Կ. ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 20-ին ՍՍՌՄ Ժողկոմսովետին կից Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեի Համամիութենական դասախոսական բյուրոյի լսարանում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ պրոֆ. Ա. Կ. Ջիվելեգովի հրապարակային դասախոսությունը «Հայաստանը և Թյուրքիան» թեմայով։

Պրոֆ. Ջիվելեգովը ունկնդիրներին ծանոթացնում է հայ ժողովրդի, աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդներից մեկի պատմական ճակատագրի հետ։— Հայերը,—ասում է նա,— իրենց պատմությունն սկսել են ասորեստանցիների հետ միաժամանակ և իրենց պատմական ուղում շփվել են միդիացիների, հին պարսիկների և Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդների հետ, և այն ժամանակ, երբ այդ բոլոր ժողովուրդները անհետացել են, հայ ժողովուրդն ապրում է։ Հայկական պետությունը, շինարարության դժվարին, բայց բեղմնավոր ժամանակաշրջանից հետո, սովետական դրոշի ներքո թևակոխում է իր նորագույն պատմության երկրորդ 25-ամյակը։ Կազմելով սովետական հզոր պետության մի մասը, Հայաստանը իր բաժինն է մտցնում Սովետական Միության արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի ու գիտության մեջ։ Սովետական իշխանության 25 տարիների ընթացքում, Հայաստանը աղքատ ու հետամնաց ծայրամասից վերածվել է ծաղկուն հողագործության, զարգացած արդյունաբերության և բազմաթիվ նորակառույցների երկրի։ Հայաստանը դարձել է բարձր կուլտուրայի երկիր. ստեղծված է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա, բացված են տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ, երկիրը ծածկված է դպրոցների ու թատրոնների խիտ ցանցով։

Պրոֆ. Ջիվելեգովը այնուհետև մանրամասն կանգ է առնում Հայաստանից խլված տերիտորիաների՝ Վանի, Բիթլիսի և Էրզրումի մարզերի պատմության վրա։ Ողբերգական է եղել այդ տերիտորիաներում բնակվող և Թյուրքական տիրապետության տակ ընկած հայերի վիճակը։ Արյունալի «խաղաղացումները» և ջարդերը հետապնդել են նրանց ամբողջ 19-րդ և 20-րդ դարերի ընթացքում, հատկապես 1877 թվի ռուս-թյուրքական պատերազմից հետո և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Եվրոպական տերությունները անտարբեր էին մնում թյուրքահայերի տառապանքներին։ Այնինչ Թյուրքիան, օգտվելով դաշնակների կառավարության դավաճանությունից, սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի դժվարություններից ու Հայաստանի թուլությունից, և հենվելով գերմանական իմպերիալիզմի ուղղակի օգնության վրա, զավթեց նախկին Ռուսական կայսրության կազմի մեջ մտնող Հայաստանի մասի Ղարսի և Արդահանի մարզերն ու Սուրմալուի օկրուգը։

Հայերի միտքը շարունակ վերադառնում է իրենց պատմական սահմաններին։ —Սովետական Հայաստանին,— ասում է այնուհետև դասախոսը,— սևեռված են ամբողջ աշխարհի հայերի հայացքները։ Վերջին ժամանակներս այդտեղ են գալիս հարյուրավոր ընտանիքներ աշխարհի բոլոր մասերից։ Հայրենիքը սիրով դիմավորում է նրանց։ Տարերային ձգտումը դեպի հայրենիքը, որը նկատվում է արտասահմանում ապրող հայերի մոտ, նոր ուժով դնում է հայ ժողովրդի համար կենսականորեն կարևոր հարցը՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնող հայկական տերիտորիաները վերամիավորել Սովետական Հայաստանի հետ։

Միավորված Ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի անունով, Հայկական ՍՍՌ Կառավարության անունով, վերջերս ընտրված Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 6-րդի անունով շարունակ աշխարհի բոլոր ծայրերից, որտեղ հայ գաղութներ կան, դիմումներ են ստացվում, որոնք հաստատ հույս են հայտնում, որ Հայկական Սովետական Ռեսպուբլիկան, վերջապես, իր դրոշի տակ կհավաքի հայկական բոլոր պատմական հողերը և աշխարհով մեկ սփռված ամբողջ հայ բնակչությունը։ Այդ պահանջների բավարարման արդարացիությունը կասկած չի հարուցում։ Հայ ժողովուրդը բոլոր իրավունքներն ու հնարավորությունները ունի հարկադրելու, որպեսզի իր հինավուրց հողերի հարստությունները ծառայեն իր ազգային պետության բարգավաճման գործին։

(ՏԱՍՍ)

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ— Կնունյանցի № 78, ՀԵՌԱԽՈՍՆԵՐ՝ Գլխ. խմբագրի տեղակալ՝ Գյուղատնտեսության՝ 13—52, Նամակների և Թղթակիցների՝ 32—97, Կուլտուրայի և կենցաղի

ԿՅ 00280